№ 15 ԿԻՐԱԿԻ ՅՈՒՆՎԱՐԻ 20

1908

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ ՅՈՒՆՎԱՐԻ 20 № 15

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

12 ամսվայ համար „ „ 10 ր.
11 „ „ „ „ „
10 „ „ „ „ 9 ր.
9 „ „ „ „ 8 ր.
8 „ „ „ „ 7 ր.
7 „ „ „ „ 6 ր.
6 „ „ „ „ „
Մնացած ամիսները ամսական Մէկ րուբլի
Ամերիկա տարեկան „ 6 դօլլար
Եւրօպա „ „ 30 ֆրանկ
Պարսկաստան „ „ 10 րուբլի

Լիդիա Նիկօլայեվնա Ամիրեան սրտի վշտով յայտնում է ազգականներին և ծանօթներին իր սիրելի ամուսին

ԵԱԶՈՆ ԵՍԱՅԵԱՆ ԱՄԻՐԵԱՆՑԻ

մահը: Մարմնի յուղարկաւորութիւնը բժիշկների ընկերութեան հիւանդանոցից (Ելիզավէտինսկի փող. № 79) կիրակի, յունվարի 20-ին, առ. ժամը 10-ին դէպի Թանդոյեան եկեղեցին (Միքայէլեան փող., բէալական դպրոցի դիմաց). Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը: 1—1

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ

ՎԱՀՐԱՄ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՄՈՒԹԱՖԵԱՆԻ

մայրը, եղբայրը, քոյրերը, հարսը և փեսան խորին շնորհակալութիւն են յայտնում ազգականներին, ծանօթներին, ընկերութիւններին, Ախալցխայի քաղաքացիներին ու նրանց պատգամաւորներին, որոնք յարգեցին հանգուցեալի յիշատակը իրանց ներկայութեամբ թաղմանը, և այն անձանց, որոնք գրաւոր յայտնեցին իրանց ցաւակցութիւնը: 1—1

ԵՂԲ. Խ. ԵՒ Մ. ՄԵԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՆԵՐԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ
ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ
Յայտարարում է ի գիտութիւն հասարակութեան,
ՈՐ ՍՏԱՑԵԼ Է
ԹԻՒՐՔԻԱՅԻՑ, ԲԱՂԴԱԴԻ սպիտակ տեսակի
ԾԵՐԱՄԻ ՍԵՐՄԵՐ
յայտնի ֆիրմաների, այն է՝
Պապիսի, Առաքելեանի, Լասկարիդիի, Թարաքչեանի, Լամբանեանի, Շիշմանեանի
եւ ուրիշների:
Վաճառքը գոյութիւն ունեցող գներով: Դիմել՝ Тифлисъ, Торг. Домъ „Бр. Х. и М. Меликъ-Марутянцъ", Сіонская улица.
(Ն. Կ.) ա. 5—4

ԱՌԱՋԻՆ ԵՒ ՎԵՐՋԻՆ
ԱՒԱՐՏՄԱՆ ՎԱՃԱՌՔ
Въ „Единственной торговлѣ
по американски"
ԽԱՆՈՒԹՈՒՄ
ՄՇՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿԱԾ
Գներից 10—30%
զեղչ
ԱՄԵՐԻԿԱ
մեկնելու պատճառով ծախում եմ իմ գեղեցիկ կերպով սարքած գալանտերէյնի և թղթի մեծ խանութը, որ առևտուր է անում օրական ոչ պակաս, քան
200 րուբլու:
Միակ առևտուր ամերիկական ձևով.
Միակ շահու վաճառականների համար.
Միակ առևտուր Թիֆլիսում.
Միակ՝ Միքայէլեան փողոցում, № 96.
(15, 17, 19 և 20) առ. 5—5

Տղամարդկանց, կանանց եւ երեխաների պատրաստի հագուստեղէնի մագազին
„ԷԿՍԵԼԱՆՍ"
Գօլօվինսկի պրօսպեկտ, տ. Մանթաշեվի, Թիֆլ. Ժողովարանի ներքեւում.
ՅԱՅՏԱՐԱՐՎՈՒՄ Է
ի գիտութիւն պ. պ. գնողների, որ «ԷԿՍԵԼԱՆՍ» ընկ. գլխաւոր վարչութեան կարգադրութեան համաձայն, ներկայ յունվարի 16-ից նշանակված է
ՄԵԾ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ
Բոլոր ապրանքների համար գները նշանակված են կոնկուրենցիայից դուրս՝ ամեն մի ապրանքադրոշմի (ЯРЛЫКЪ) հակառակ երեսի վրա՝ կապոյտ մատիտով: Գների էժանութիւնը պ. պ. գնողները կարող են ստուգել անձամբ:
ԳՆԵՐԸ ԱՌԱՆՑ ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ
(17, 20, 27) առ. 3—2

Թիֆլիսի Ժողովարան
Կիրակի, յունվարի 20-ին
Յօգուտ
ԽԱՐՓՈՒԽԻ Ս. ՍԱՐԳՍԻ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
Մասնակցութեամբ դերասանուհի տիկ. Դուրեան-Արմէնեանի, օր. Բերեժանեանի, դերասաններ պ. պ. Ա. Արմէնեանի, Գ. Իփէկեանի և սիրողների
Կը ներկայացվի
I
ՀԻՒՐԸ
Դրամա 2 գործ., հեղ. Էդ. Բրանդէսի, Թարգմ. Թառայեանի
II
ԱՆԳԼԻԵՐԷՆ ԽՕՍԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ
Կոմ. 1 գործ., հեղ. Բօրների, Թարգմ. Ա. Արմէնեանի
ՎԻՃԱԿԱԽԱՂ ԱԼԼԷԳՐԻ
Ընդմիջումներին կը նուագէ երաժշտական խումբը:
Տեղերի գները 3 ր. 20 կ.—75 կ.
Կանգնած՝ 50 կոպէկ
Սկիզբը ճիշտ ժամը 8-ին երեկոյեան
Տոմսակները կարելի է ստանալ ժողովարանի շվէյցարից:
առ. (Ն. Շ. Կ.) 3—3

Ծննդաբերութեան
ԱՊԱՍՏԱՐԱՆ
մանկաբարձուհի Ր. Ջ. ԿՐԻՆՍԿՈՒ
(Նիկօլաեվսկի փ. տուն № 47. հեռ. 646.)
Ծննդկանների ընդունելութիւնը օրվայ և գիշերվայ ամեն ժամանակ: Հոգատար խնամք և մշտական բժշկական օգնութիւն: Կան առանձնասենեակներ: Պայմանները՝ ընդհանուր բաժանմունքում օրական 2 ր., ծննդաբերութիւնը 6 ր.: Առանձին սենեակի և կանացի հիւանդութիւնների համար ըստ համաձայնութեան: Ընդունվում են կին հիւանդներ և ստնտուներ ի քննութիւն: Ամենայն օր ցերեկվայ ժամը $12^1/_2$—$1^1/_2$:
(Ն. Կ.) առ. 10—3

ԿՏԱԿՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆԸ

Ջահազիզի մահը նորից խօսեցնել տուեց կտակների մասին:

Ունեցել է արդեօք հանգուցեալը կտակ թէ ոչ—յայտնի չէ ոչ ոքի: Ենթադրում են, որ Ջահազիզը իր կտակի բնագիրը կամ պատճէնը ուղարկած է եղել Էջմիածին: Ճիշտ է արդեօք այդ ենթադրութիւնը՝ կը պարզվի ապագայում:

Բայց մենք օգտվում ենք դէպքից դնելու մի ընդհանուր խնդիր այն կտակների մասին, որոնք հասարակական նշանակութիւն ունեն և որոնք տրամադրում են նուիրատուութիւններ բարեգործական կամ կուլտուրական նպատակներով:

Անհրաժեշտ է, որ կտակների բովանդակութիւնը յայտնի լինի ամբողջ հասարակութեան և նրանց կատարման վրա ընդհանուր վերահսկողութիւն ունենար, բացի կտակակատար անձերից և հիմնարկութիւններից, նաև հասարակութիւնը իր ամբողջութեամբ՝ իր հանրային կարծիքի, իր մամուլի միջոցով:

Կտակներ կան, որոնց պատուէրները չեն կատարվում. կտակներ կան, որոնց գոյութեան մասին հասարակութիւնը մոռացել է. կտակներ կան, որոնց իրագործելու սկզբնաւորութիւնը հասնելու է որոշ ժամանակից յետոյ. կտակներ կան, որոնց գումարները գտնվում են այս ու այն ձեռքերում, իբրև աւանդ և պահուստ:

Մի քանի հիմնարկութիւններ, որոնք կանոնաւոր գործում են, որոշ վերահսկողութիւն ունեն իրանց մօտ եղած կտակների վրա. բայց առհասարակ հսկողութիւնը շատ թոյլ է կտակների վերաբերութեամբ: Եւ մենք համոզված ենք, որ եթէ մշակվի աչալուրջ հասարակական հսկողութեան մի սիստեմ, մենք ոչ միայն կը յայտնագործենք հասարակական-կուլտուրական գործի համար տրամադրելի անյայտ մնացած գումարներ, այլ և կը խրախուսենք շատերին կազմելու կտակներ բարեգործական և կուլտուրական նպատակներով:

Եթէ Էջմիածինը կամ մեր հասարակական հիմնարկութիւններից որ և է մէկը յանձն առնէր կազմել եղած կտակների ցուցակը և հրատարակել կտակների բովանդակութիւնը յատուկ մատեանով, սկիզբ կը դնէր մի ժողովածուի, որը տարէ-տարի կը ստուարանար լրացուցիչ նիւթերով:

Թերթելով հին լրագիրները՝ մենք մի քանի անգամ հանդիպել ենք կտակների, որոնց մասին տեղեկութիւն չունի մեր հասարակութիւնը: Եւ անյայտ չէ ոչ ոքի, որ մի քանի գումարների վերաբերմամբ ժառանգները որոնում են ցուցումներ հին թերթերի մէջ, որոնց օրինակները ճարվում են շատ մեծ դժուարութեամբ, կամ բոլորովին չեն գտնվում:

Մի յատուկ ժողովածու, նուիրված կտակներին, կարող կը լինի օգտակար ծառայութիւն մատուցած լինել մեր հասարակութեան, և իւրաքանչիւր նոր կտակ գրող կամ կուղարկէ այդ ժողովածուի համար իր կտակի պատճէնը, կամ կը կարգադրէ, որ իր կտակակատարները նրա մահից յետոյ յանձնեն այդ պատճէնը ժողովածուի մէջ զետեղելու համար:

Երբ որ հասարակութեան լայն խաւերին յայտնի կը լինի կտակների բովանդակութիւնը, այն ժամանակ նա ինքը իր վրա կը վերցնէ ընդհանուր վերահսկողի պաշտօնը և կը նպաստէ կտակակատարների գործին առանձին դէպքերում:

Պէտք է պարզել, թէ ինչ կտակներ կան մինչև այժմ կազմված հանրային նպատակներով, և հասարակութեան ձեռքը տալ նրանց իրագործութեան ընդհանուր վերահսկողութիւնը:

Ա. Քալանթար

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Մինչ այստեղ, Մերձաւոր Արևելքում, թիւրք-պարսկական ընդհարումները, օսմանեան գրաւումները Ատրպատականում մեծ երկիւղ են ազդում, թէ կարող է պատերազմ բռնկվել, որին գուցէ մասնակցէ և Գերմանիան, այնտեղ, հեռու՝ Աֆրիկայում, Մարօկկօյում, Գերմանիան տանում է մի նոր դիպլօմատիական յաղթանակ, որ նոյնպէս սպառնում է միջազգային մեծ բարդութիւններ առաջ բերել և նոյնիսկ պատերազմ Ֆրանսիայի և Գերմանիայի միջև:

Քաղաքական հօրիզօնը մթագնվում է չարագուշակ ու մռայլ ամպերով:

Ինչպէս յայտնի է, Եւրօպայի կողմից Ֆրանսիային էր յանձնարարված կարգ և խաղաղութիւն մտցնել Մարօկկօյում, որի սուլթանը, Աբդիւլ-Ազիզ, անկարող էր հանդիսացել այդ կարգը և խաղաղութիւնը պահպանելու: Մարօկկօյում վաղուց ապստամբութիւն է ծագել տեղական բազմաթիւ ցեղերի մէջ, որոնք դժգոհ լինելով Աբդիւլ-Ազիզի կառավարութեամբ և եւրօպացիներին արված զիջումներով՝ ապստամբութեան դրօշակ են բարձրացրել: Ապստամբութեան դրօշակ է բարձրացրել և սուլթանի հարազատ եղբայր Մուլայ-Հաֆիզը, որ հինգ ամիս առաջ Մարօկէշ քաղաքում իրան սուլթան հրատարակեց, իսկ իր եղբօրը՝ գահընկէց, սակայն աջողութիւն չունեցաւ, որովհետև նա թէ քիչ կողմնակիցներ ունէր, թէ քիչ դրամական միջոցներ և, բացի դրանից, Մարօկկօյի հարցի մէջ շահագրգռված պետութիւններից ոչ մինը չը ճանաչեց նրա սուլթանութիւնը և Ֆրանսիան պաշտպանեց օրինաւոր սուլթանին:

Սակայն այժմ, յանկարծ, իրերի վիճակը կերպարանափոխվեց. ֆրանսիական դիպլօմատիան և ֆրանսիական ազդեցութիւնը Մարօկկօյի վրա այնպիսի մի ծանր հարուած կրեց, որից նա դժուար թէ շուտով կարողանայ վերականգնել: Մարօկկօյի մայրաքաղաքում, Ֆէցցում, երկրի բոլոր ականաւոր անձերը (նօթաբլները) և ուլեմաները (հոգևորականութիւնն ու ուսումնականները) գումարվելով, պահպանութեամբ բոլոր ձևականութիւնների, Մարօկկօյի սուլթան են հրատարակել Մուլէյ-Հաֆիզին և պաշտօնապէս յայտնել սուլթան Աբդիւլ-Ազիզին, Ռաբատ քաղաքը, թէ նա ժողովրդի վճռով գահընկէց է: Նօթօբլների որոշման մէջ Աբդիւլ-Ազիզը մեղադրվում է այն բանի մէջ, որ նա գործում էր քրիստոնեաների թելադրութեամբ, զիջում էր նրանց ամբողջ քաղաքներ և նրանց տրամադրութեան ներքոյ էր դրել բնիկ զօրքը, մի բան, որ Ղուրանով սաստիկ արգելված է:

Ուրեմն երկիրը իր նօթաբլների և ուլեմաների ձեռքով գահընկէց է արել այն սուլթանին, որին Ֆրանսիան պարտաւոր է պաշտպանել Ալժեզիրասի դաշնադրութիւնների համաձայն: Ուրեմն Ֆրանսիան ստիպված է կռիւ յայտարարել նոր սուլթան Մուլայ-Հաֆիզին: Եթէ ի նկատի ունենանք այն յամառ լուրերը, որոնք պտտում են, թէ Մուլայ-Հաֆիզին թև և թիկունք տուողը Գերմանիան է, որ խոստացել է պաշտպանել նրա սուլթանութիւնը, մենք կը հասկանանք՝ թէ Ֆրանսիան այժմ որպիսի նեղ դրութեան մէջ է դրված:

Միւս կողմից, անկասկած, ֆրանսիական պառլամենտի սօցիալիստական ընդդիմադրութիւնը պէտք է սաստկացնէ իր յարձակումները Կլեմանսօյի կաբինետի դէմ Մարոկկօյի հարցի առիթով։

Այժմ պէտք է սպասել և տեսնել, թէ Սպանիան ինչ դիրք կը բռնէ, որովհետև Մարոկկօյի հարցում ամենից շատ շահագրգռվածը նա է։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ.—Յունվարի 16-ին Թագաւոր Կայսրին բաղդ ունեցան ներկայանալ Կովկասի Փոխարքայի օգնական գեներալ-լէյտենանտ Ն. Շատիլօվը և Թիֆլիսի տեղական բրիգադայի հրամանատար գեն.-մայոր Դոմբրօվսկին։ («Кав.»)

Քութայիսից «Т. Л.» լրագրին հեռագրում են, որ յունվարի 18-ի երեկոյեան քաղաքի Զարէչնի կոչված թաղում ոստիկանութիւնը գտել է լաւ սարքած գաղտնի տպարան. գտնված են նաև ռումբեր, հրացան, փամփուշտներ և սնդիկ։ Ձերբակալված է մի հոգի։

Պետերբուրգ.—„Голосъ Москвы" լրագիրը, կաբինէտի առաջիկայ փոփոխման մասին նուիրած մի յօդուածում, ասում է, որ պրեմիէր հաւանօրէն կը նշանակվի սենատոր Տրէպօվը և որ այդ փոփոխութիւնը սպառնում է՝ արձակել Պետական Դուման և անջատել կառավարութիւնը հասարակութիւնից։

Այսօր, յունվարի 17-ին, Ամերիկայից վերադարձաւ Միլիւկօվը։

Պետական Դումայի ընտրութիւնները ստուգող մասնաժողովը եզրակացրեց, որ Մինսկի նահանգի պատգամաւոր Շմիդտի ընտրութիւնը ապօրինաբար է կատարվել։

Նաւատորմիղ կառուցանելու խնդրով զբաղվող մասնաժողովը որոշում կայացրեց, որ անհրաժեշտ է գումար յատկացնել նաւատորմղի համար, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ հարցը շաղկապված է Ամերիկայի հետ մտադրվող դաշնագրութեան հետ։

Յայտնի սև-հարիւրեակային Իլլիօդօր վարդապետը խելագարվեց և տեղաւորվեց հոգեկան հիւանդների հիւանդանոցում։ («Каспій»)

Գանձակ, 18 յունվարի

Այս օրերս մի վերին աստիճանի ցաւալի լուր ստացանք Ղարադաղլու գիւղից։ Երկու օր առաջ Ղարադաղլու գիւղը որսի են գնում նոյն գիւղացի Միքայէլ Օհանջանեան (որը յայտնի է «ղարադաղլուեցի Մուխի» մականունով), Զումի Աստուածատրեան, և մի գանձակեցի երիտասարդ, որոնք անտառում ընդհարվում են թուրք աւազակների հետ։ Երկար ժամանակ սկսվում է երկու կողմից հրացանաձգութիւն, որի ժամանակ, ինչպէս ասում են, հայերից երկուսը ծանր վիրաւորված են, մէկը սպանված։ Թուրքերի կողմից սպանված են երկուսը։ Թուրքերը աշխատում են մօտենալ հայերին, բայց յետ են մղվում։ Տեղեկութիւններ բերող թուրքը աւելացնում է, որ դէպքի վայրն է գնացել պրիստաւը։ Մանրամասնութիւնները պակասում են. ստանալուց՝ կը յայտնեմ։ Ստացած տեղեկութիւններս թուրքական աղբիւրներից են։

Սագան

Լ. Ն. Տօլստօյի նամակը

Հենրիխ Սենկևիչը հարց տուեց ժամանակակից յայտնի անձնաւորութիւններից շատերին, թէ ինչ կարծիք ունեն նրանք լեհական հողերի գրաւման այն օրէնքի վերաբերութեամբ, որը ընդունվեց պրուսական սէյմից։ «Matin»-ում տպված է ռուս մեծ գրողի պատասխանը։ Տօլստօյը թափանցում է գործի խորքը, մինչև պետականութեան և նրա նպատակների ժամանակակից կուլտը, որպէսզի ապացուցած լինի, որ ներկայումս պետութեան գաղափարին ծառայող պետական մարդիկ չեն կարող իրանց դիրքերը գրաւել ոչ այլ կերպ, եթէ ոչ իրանց բարոյական անկման պայմանով։ «Պէտք չէ յուզվել նրանցից,—ասում է նա բառացի կերպով,—ինչպէս այնպիսի անձերից, որ կորցրել են մարդկութեան ամենասուրբ զգացմունքը, և մանաւանդ պէտք է կռուել նրանց դէմ։ Հարկաւոր է կռուել միայն պետական գարշելի, ճնշող մեքենայի դէմ, որի մէջ է պարփակված մարդկային տանջանքների աղբիւրը, այն նախապաշարմունքի դէմ՝ թէ անհրաժեշտ է ճնշող, հարստահարող պետութեան գոյութիւնը, պետութեան՝ որպիսին հակառակ է քրիստոնէական աշխարհի համոզմունքներին և որպիսին պատնէշներ է կառուցանում առաջադիմութեան, պրօգրեսի առաջ, որին մարդկութիւնը վաղուց է հասել։

«Ես շատ ցաւում եմ այդ կողոպտման գործադրողներին և կազմակերպողներին, քան նրա զոհերին։ Վերջինները եթէ ուրիշ երկրում, ուրիշ պայմաններում լինեն, կը մնան այնպէս, ինչպէս սկզբումն են եղել։ Ցաւում եմ հարստահարողներին, նրանց, որոնք պատկանում են աւազակային ժողովրդի և պետութեան ու որոնք համերաշխ են նրանց հետ։ Կարծում եմ, որ ոչ ոք, ով բարոյական զգացմունքի տէր է, չի տատանվի այն րոպէում, երբ որոշում է՝ աւելի լաւ է պրուսացի՞ լինել, բայց համաձայն իր կառավարութեան հետ, թէ՞ լեհ—զրկված իր հայրենի օջախից»։

Թաւրիզ.—Ֆարման-Ֆարմա Միանդաբի վրայով հեռագրեց Թաւրիզի անջումանին, որ Սօվուջ-Բուլաղից մէկ մղոն հեռաւորութեան վրա գտնվող Քիօսակահրինչ գիւղում, թիւրքաց զօրքի հրամանատար Ֆէրիգ-փաշան վերստին դրականապէս առաջարկեց իրան թողնել Սօվուջ-Բուլաղը, յայտնելով, որ մինչև Զագատ գետը ամբողջ երկիրը պատկանում է թիւրքերին։

Թեհրան.—Պարսից սահմանագլխում թիւրքաց զօրքի հրամանատար Ֆազիլ-փաշան Սօվուջ-Բուլաղը պաշարող գեներալ-նահանգապետ Ֆարման-Ֆարմայի հետ նամակագրութիւն սկսեց և սկզբում խորհուրդ տուեց Միանդաբից առաջ չը գնալ, իսկ յետոյ պահանջեց վերադարձնել պրինցին Սօվուջ-Բուլաղից։ Այժմ նա նախազգուշացնում է, որ կը գրաւէ Մահմէդ-շահ գիւղը պարսից հողի վրա։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԻ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Մօսկվա, 12 յունվարի

Սմբատ Շահազիզի մահից յետոյ ընթերցող հասարակութեան առաջ մի շատ կարևոր հարց պիտի դրված լինի,—թէ հանգուցեալը ինչ ժառանգութիւն թողեց և ում, կամ նա կտակ ունի՞ թէ ոչ։ Այդ հարցի լուրջ լուսաբանութիւնը կարևոր է նախ՝ այն պատճառով, որ հանգուցեալի ժառանգութեան հետ կապված է «Աբովեան-Նազարեան գրականական ֆօնդի» հարցը, երկրորդ՝ որ նա յանկարծամահ է եղել, երրորդ՝ որ նա ամուսնացած չէր, չորրորդ՝ որ նրա թողած ժառանգութիւնը մօտ 150 հազար րուբլու է հասնում և, վերջապէս, հինգերորդ՝ որ նրա այդ խոշոր ժառանգութեան մասին շատ բաներ է պատմվում տեղիս հայ հասարակութեան մէջ։

Դեռ հանգուցեալի կենդանութեան օրօք՝ նրա մօտ ծանօթները ասում էին, որ Սմբատ Շահազիզ իր ամբողջ հարստութիւնը համարեա թէ կտակել է ազգին. ասում էին, որ նա իր ահագին հարստութիւնից մի աննշան մասն է բաժին հանել իր ազգականներին, որ նա լաւ կտակ ունի և այլն։ Այդ հարցով հետաքրքրվողներս համարեա թէ նոյն կարծիքին էինք. մենք ևս համոզված էինք, որ Շահազիզն անպայման կտակ կունենայ։ Եւ ահա կտակի այդ հարցն է, որ կարգադրիչ յանձնաժողովը, հանգուցեալ Շահազիզի թաղումից յետոյ, լուրջ քննութեան առարկայ դարձրեց և երկար զբաղվեց նրանով։ Այստեղ պէտք է նկատել, որ Շահազիզի կտակով պակաս շահագրգռված չէին հանգուցեալի ազգականները և ռուսաց դատարանը։

Մենք աւելորդ չենք համարում պարզել այդ խնդիրը մեր ընթերցողի առաջ։

Դեռ հանգուցեալի թաղումից առաջ՝ կարգադրիչ յանձնաժողովը մի հեռագրով դիմել էր Էջմիածին իմանալու՝ թէ հանգուցեալը այնտեղ կտակ ունի՞ թէ ոչ։ Այդ դիմումին հետևել է մի հակիրճ հեռագիր Էջմիածնից. «Շահազիզը կտակ չունի սինօդում, վեհարանը կնքված է։ Սինօդի անդամ՝ Բաբգէն վարդապետ»։ Այս հեռագրից կարելի է մի բան եզրակացնել, որ Շահազիզը կարող է վեհարանում կտակ ունենալ կամ չունենալ. յամենայն դէպս այդ հարցը դեռ բաւական մութ է։

Ես արդէն հաղորդել եմ, որ հանգուցեալի համարը կնքված է։ Այդ հանգամանքը բաւական է ցոյց տալու համար, որ հնարաւորութիւն չը կայ քրքրելու հանգուցեալի թղթերը և իմանալու կտակի գոյութեան մասին։ Բայց չը նայած դրան, պ. Եր. Շահազիզին, երկար ջանք գործ դնելուց յետոյ, աջողվեց իրաւունք ստանալ պատշաճաւոր իշխանութիւնից և աչքի անցկացնել հանգուցեալի թղթերը։

Մեր հաւաքած տեղեկութիւնները այդ մասին՝ տալիս հետևեալ արդիւնքները։

Պ. Եր. Շահազիզը հանգուցեալի թղթերի մէջ գտել է զանազան տեղերից ստացված նամակներ, մեծադիր մի թերթ թուղթ, որի առաջին երեսի վրա գրված է եղել այն բոլոր հաստատութիւնների, հիմնարկութիւնների և իր ազգականների անունները, որոնց միջև հանգուցեալը բաշխում է իր ամբողջ հարստութիւնը. այստեղ գրված է եղել, թէ ամեն մի հիմնարկութեան կամ ազգականի որպիսի գումար է նուիրում հանգուցեալը. այսպէս—Ներսիսեան, Շուշու և մնացած մեր թեմական դպրոցներին 20 հազարական րուբլի է նուիրում։ Այդ նոյն թերթի երկրորդ երեսի վրա այդ գումարը պակասեցնում է 2 հազար րուբլով և ամեն մի դպրոցի 18 հազար րուբլի թողնում, և, վերջապէս, այդ նոյն թերթի երրորդ երեսի վրա հանգուցեալը գրել է միմիայն մի շարք հիմնարկութիւնների, հաստատութիւնների և իր ազգականների անունները, առանց նշանակելու սակայն, թէ ո՛ր հիմնարկութեան ո՛րպիսի գումար է թողնում։ Այդ թուղթը առանց ստորագրութեան և առանց թւականի մի կտակի սևագրութիւն է ներկայացնում իրանից։ Թղթի մէջ նշանակված են եղել նաև կտակակատարների անունները, որոնք են՝ պրօֆ. Իւրիյ Վեսելօվսկի, իրաւաբան Ստեփան Մամիկոնեան, բժ. Գերասիմ Վլասօվ (հայ) և Լազարեան ճեմ. ուսուցիչ Խաչատուր Յովհաննիսեան։

Պ. Եր. Շահազիզ այդ թուղթը ծալում դնում է մի ծրարի մէջ և թողնում իր տեղում։ Այդ բանին ներկայ եղող ռուս պաշտօնեան հետաքրքրութեամբ հարցրել է՝ թէ այդ ինչ թուղթ է, Եր. Շահազիզ ասել է, որ կտակի սևագրութիւն է. բայց այդ պաշտօնեան պատասխանել է պ. Շահազիզին, որ այդ ձևով կազմած կտակները գրօշ չարժեն օրէնքի առաջ։

Բացի այդ թղթից, պ. Շահազիզ գտել է հետաքրքրութեան արժանի մի դօկումենտ ևս. այդ մի տետրակ է, որի մէջ գրված է այն գրականագէտների անունները, որոնք, ի հաշիւ հանգուցեալի տրամադրութեան տակ գտնվող գրականական ֆօնդի, նպաստ են ստացել Սմբատ Շահազիզից։

Ահա այն բոլորը, ինչ որ աջողվեց անելու պ. Եր. Շահազիզին, քրքրելով հանգուցեալի թղթերն ու իրերը։

Բայց այդ դեռ բոլորը չէ և, ինչպէս ընթերցողը տեսնում է, ո՛չ մի մխիթարական բան չը կայ դրանում։ Մեզ աւելի զբաղեցնում է օրինական նօտարական կտակի խնդիրը. նա բաւական հետաքրքրում է տեղիս հայ հասարակութեանը և դեռ երկար ժամանակ պիտի շարունակէ զբաղեցնել ընթերցողին ևս։

Պ. Եր. Շահազիզ հանգուցեալի թղթերի քրքրումը անբաւարար համարելով՝ պտըտում է բոլոր նօտարական գրասենեակները, ուր վերջին 5 տարվայ մատեանները աչքի անցկացնելով՝ դարձեալ կտակ չեն գտնում. բոլոր տեղերում բացասական պատասխան են տալիս։ Կտակ չը կայ, կտակը կորել է...

Այդ միջոցն ևս բաւական չը համարվեց, կարիք զգացվեց դիմել հանգուցեալի մօտ ծանօթներին և կարծիքներ իմանալ կտակի մասին։ Այսպէս, հանգուցեալի ծանօթներից մէկը յայտնեց, որ հանգուցեալ Շահազիզ, դեռ 1892 թ., երբ հայոց դպրոցները փակվեցին, իբր թէ կտակ է կազմել և ուղարկել Կ. Պօլսի պատրիարքարանը, միաժամանակ կտակակատար նշանակելով պատրիարքարանին։ Մի ուրիշ պարոն պատմում է, որ հանգուցեալի մօտ ծանօթ մի նօտար՝ Ուսպենսկի ազգանունով, ասել է իրան, որ հանգուցեալը 1896 թ. կտակ է արել իր մօտ։ Արդեօ՞ք այդ բանը ճիշտ է, հանգուցեալը ինչպէ՞ս որ այդ թւին կտակ է արել և նա մինչև օրս պահպանում է իր օրինական ուժը թէ՞ ոչ,—այդ մասին ոչինչ դրական բան ասել չէ կարելի, քանի որ դեռ պ. Ուսպենսկու մօտ վերջնականապէս չէ ստուգված այդ բանը։ Մի գուցէ հանգուցեալը 11 տարի առաջ պ. Ուսպենսկու մօտ կտակ արել է և նոյն օրինական ճանապարհով՝ էլ ոչնչացրել։ Պ. Ուսպենսկու մօտ կտակ լինել չը լինելու խնդիրը դեռ վերջնականապէս լուծված չէ. այդ բանը ստուգվում է, իսկ հետևանքները մինչև օրս յայտնի չեն։

Այդ բոլորից յետոյ կայ մի հեղինակաւոր կարծիք, որ արժէ ուշադրութեան առնել. դա պրօֆ. Իւրիյ Վեսելօվսկու կարծիքն է։ Նա ասում է, որ հանգուցեալը կտակ արած է եղել, նա համարեա թէ իր ամբողջ կարողութիւնն իր ազգին է եղել կտակած։ Պ. Վեսելօվսկի մինչև իսկ աւելացնում է, որ հանգուցեալ Շահազիզ իրան ասել է իր կտակի վերջին խօսքերը, թէ՝ «Թող իմ ժառանգները չը նեղանան, որ նրանց քիչ եմ տալիս. իմ ժառանգը—իմ ազգն է»։

Այստեղ մի անգամ ևս պէտք է յիշել այն, որ հանգուցեալ Շահազիզ իր ժառանգութեան մի աննշան մասն է բաժին հանում իր ժառանգներին։ Նա իր ամբողջ հարստութիւնն իբր թէ թողած պիտի լինի ազգային զանազան հիմնարկութիւններին ու հաստատութիւններին, «Աբովեան-Նազարեան գրականական ֆօնդին» և այլն...

Վերջին ժամանակս, երբ նա ինչ-ինչ պատճառներով կորցնում է իր հարստութեան մի մասը, այն ժամանակ նա յայտնում է իր մօտ ծանօթին, թէ «կտակս պէտք է բերել տամ Էջմիածնից և փոխել տամ»։ Եթէ յիրաւի, հանգուցեալ Շահազիզ այդ խօսքերը ասել է, և եթէ իսկապէս նա Էջմիածնում կտակ ունեցել է, ապա մնում է որ Էջմիածինն ինքը հոգայ այդ մասին, նորից տնտղէ վեհարանի ու սինօդի գործերը և վերջնականապէս յայտնէ մամուլում այդ մասին։ Եթէ ընդունելու լինենք, որ Շահազիզի վերջին խօսքերը ճշմարիտ են, ուրեմն պէտք է եզրակացնել, որ նա կտակ ունի։

Առհասարակ պէտք է շեշտել այն հանգամանքը, որ հանգուցեալ Շահազիզ, ինչպէս նրա մօտ ծանօթներն են պատմում և ինչպէս բոլոր պարագաները ցոյց են տալիս, միշտ զբաղված է եղել կտակի խնդրով. այդ հարցը նրա մտատանջութեան մշտական առարկան է եղել։ Յամենայն դէպս, պէտք է ենթադրել, որ Շահազիզ անպայման կտակ թողած կը լինի։ Մենք առայժմ վերջնական վճիռ արձակել այդ մասին չենք կարող, քանի որ կտակի գոյութեան հարցը դեռ վերջնականապէս լուծված չէ։ Մենք մի առժամանակ ևս կը սպասենք և այնուհետև կասենք մեր վերջնական խօսքը այդ մասին։

Շահազիզի թողած ժառանգութեան մէջ մտնում է «Աբովեան-Նազարեան գրականական ֆօնդի» գումարն ևս, որին կը դառնանք մենք մանրամասն յաջորդ անգամ։

Ոսկու-Զօն

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Ի նկատի ունենալով Բագուի քաղաքապետ գեներալ-մայոր Կօնեվսկու յարուցած միջնորդութիւնը, որ առժամանակ, մինչև նրա արձակման մասին Բարձրագոյն հրամանի ստանալը, իր հիւանդութիւնն աչքի առաջ ունենալով, արձակեն իրան կայսրութեան ներքին նահանգները, առաջարկում եմ Դաղստանի հետևակ 82-րդ գնդի հրամանատար գեն.-մայոր Ֆօլբաումին ժամանակաւորապէս վարել Բագուի քաղաքապետութեան պաշտօնը։ Միաժամանակ իրաւունք եմ տալիս լինել զօրահրամանատար Բագուի քաղաքապետութեան շրջանում, նկատի ունենալով որ Բագու քաղաքը և Բագուի նահանգը յայտարարված է արտակարգ պահնորդական դրութեան մէջ։

Ստորագրեց՝ Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայ և Կովկասեան զինուորական շրջանի զօրքերի ընդհանուր հրամանատար գեն.-լէյտ. կոմս Վօրօնցօվ-Դաշկօվ։ („К.")

18 յունվարի 1908 թ.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՖՐԱԿՑԻԱՆԵՐՈՒՄ

◆ Մօտ ժամանակներս սահմանադիր-ռամկավարները մտադիր են հարցապնդում անել Դումայում մամուլի դրութեան մասին ներկայ մօմենտում։ Այդ հարցապնդումը ուղղված կը լինի մինիստրների խորհրդի նախագահին և ներքին գործերի մինիստրին։ Վերջնական ձևակերպութեան համար արդէն հարկաւոր տեղեկութիւններ են հաւաքում։

◆ Ներկայումս կադետների և հոկտեմբերեանների շրջաններում եռանդուն կերպով քննվում է Դումայի աշխատանքները փոքր ի շատէ կարգաւորելու հարցը, որը իրերի ներկայ դրութեան մէջ վտանգվում է թաղվել լուծման սպասող բազմաթիւ աշխատանքների մէջ։ Սահմանադիր-ռամկավարների պարլամենտական ֆրակցիան յանձնարարել է նորընտիր մասնաժողովին մշակել Դումայի համար աշխատանքների մի ընդհանուր ուրուագիծ, որ քննվելուց և ընդունվելուց յետոյ ղեկավարող նիւթ կը հանդիսանայ ֆրակցիայի անդամների համար։ Նոյն խնդրով է զբաղված ներկայումս հոկ-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՕՎՈՒՋ-ԲՈՒԼԱՂԻ ՇՈՒՐՋԸ

V

Թաւրիզ, 10 յունվարի

Տասնհինգօրեայ ակամայ ընդհատումից յետոյ միայն վերադառնում եմ այս հրատապ խնդրի շուրջը. ակամայ ընդհատում, որի պատճառները պիտի փնտռել առհասարակ Պարսկաստանում պատահած անակընկալների անորոշութեան քաօսների մէջ։ Ռուս-ճապօնական պատերազմի ամբողջ ընթացքում մենք, Պարսկաստանում ապրողներս, աւելի շուտ ու ճշմարիտ տեղեկութիւններ էինք ստանում, քան այստեղ՝ մեր քթի տակ օրը ցերեկով կատարվող դրամաներից... «Ասո՛ւմ են». և ահա այդ չարաբաստիկ «ասում են»-ների հազարաւոր երանգների խճճմունքի մէջ մնում է շուարած այն թղթակիցը, որը իր նշանաբանն է ընտրել ճշգրիտ տեղեկութիւններով գոհացնել ընթերցողի հետաքրքրութիւնը այս քաղաքական խոշոր անակնկալի մասին. և մենք սպասեցինք 15 օր, որպէսզի հնարաւորութիւն ունենանք այդ բազմերանգ «ասում են»-ներից մի որոշ եզրակացութիւն քաղել և պահպանել մեր թղթակցութեան ամբողջական շարունակութիւնը։ Մենք մասամբ հասած ենք մեր ցանկութեանը։ Իշխան Ֆարման-Ֆարման երկու օր Թիսաքում մնալով և պրինց Իմամ-Ղուլի-Միրզայի հետ կարևոր խորհրդակցութիւնը անելուց յետոյ՝ անմիջապէս, սախլողական պահանջից դրդված, դեկտեմբերի 15-ին ճանապարհվեց Միանդաբ։ Այնտեղ արդէն պատրաստ էր զօրախումբը՝ թւով մինչև 12,000, որից 2000 ձիաւոր, իսկ 10,000 զինւոր հետևակներ։ Երկու օր այնտեղ մնալով՝ նա հետևեալ զինուորական բաժանումները կարգադրեց. Փարվիզ-խան-Սարհէնգ Էնակօլօպեանին (հայ) յանձնեց 2000 հետևակ և 100 ձիաւոր և ուղարկեց Միանդաբ—Սօվուջ-Բուլաղի միջակէտ Ամիրաբադում բանակել. 3000 հետևակ և 200 ձիաւոր թողեց Միանդաբում՝ Սարդարը-Մուխբէդերի հրամանատարութեան տակ պաշտպանելու սահմանը. իսկ ինքը իր հետ վեր առնելով 5000 հետևակ և մօտ 1500 ձիաւորներ՝ պատրաստվեց անցնել ուղղակի Սօվուջ-Բուլաղ։ Պատերազմական խորհրդի այդ կրիտիկական ժամերում յանկարծ մի անակնկալ—եթէ ո՛չ տարօրինակ—պատգամաւորութիւն է ներկայանում իշխանին, և գիտէ՞ք ում—Ֆէրիգ փաշայի կողմից, բաղկացած ութն հոգուց, երկու սպայից և հինգ ասկէրից. զանազան «ասում են»-ներից մենք վերջապէս իմացանք այդ պատգամաւորութեան միսիան, այդ խորհրդաւոր թւանշանի «շքախմբի» (զինուորական ամենաճոխ համազգեստի մէջ) այցելութիւնը փայլում էր քաղաքական պօլիտիկի ամենասատոր ժանուածապատութեամբ, որ միշտ յատուկ է Եըլդըզի մենաւոր «դիպլօմատիկ հիւանդին». Ֆէրիգ փաշան, այդ խորամանկ ծերուկ դիւանագէտը առաջարկում է իշխան Ֆարմանին, որ «ի նկատի ունենալով քիւրդական ներկայ ապստամբ աշիրաթների բռնած դիրքը՝ ինքը հրաման է ստացել վեհ. սուլթանից պահպանել սահմանը, որպէսզի ապստամբները հնարաւորութիւն չունենան անցնել դէպի թիւրքական հողը, որից կարող է առաջ գալ քաղաքական նորանոր բարդութիւններ։ Իսկ փարատելու համար ձեր կասկածները—որ անշուշտ առաջ է եկել թիւրիմաց դէկուցումներից—այս օրերից հեռացվում են մեր մասնաւոր զինուորները քաղաքից, որոնք ուղարկված էին պաշտպանելու թիւրքական հիւպատոսարանը անակնկալ պատահարներից, որ կարող է շուտով առաջ գալ մի անպաշտպան քաղաքից, ուր պաշտօնական մարմին չը կար։ Ձեր ներկայութեամբ Աստուծով կը խաղաղվի կեանքը և կը կը պատժվեն ըմբոստները. սակայն մի հանգամանք, որ ձեր ուշադրութեան պիտի արժանի լինի—բարեացակամ վերաբերմունք դէպի մեր հին եւ նոր հպատակներն են, որը անշուշտ ի նկատի կունենաք յանուն խաղաղական օրէնքների»։

Աւելի քան ցինիկ քաղաքագէտ լինելու համար հարկաւոր է միայն սնվել Պօլսի դիպլօմատիկ շրջանում. օրը ցերեկով ապօրինի գրաւումների ոտնձգութիւններ անել և ապա առանց կարմրելու ծակ փաստաբանութեամբ թող փչել մի թէև անոյժ, սակայն ո՛չ այնքան անքաղաքագէտ զինուորական հրամանատարի աչքերին՝ կրկնում եմ, այդ աւելի քան լկտութիւն է. և հէնց այդ հիման վրա իշխանը խնդացել է վերջին պարբերութեան վրա ու «շնորհակալ եմ, լաւ» լակօնական բառերով ճանապարհել... Եւ իր վերջին կարգադրութիւններն անելով՝ դեկտեմբերի 18-ին ճանապարհվեց Սօվուջ-Բուլաղ։

Սօվուջ-Բուլաղում իշխանին պատշաճաւոր ընդունելութիւն չէ եղել, այնպէս որ մենակ իր շքախմբով անցել է քաղաքի համարեա թէ դատարկ փողոցներից և իջևանել դար-խանէի շէնքում։ Միակ ազդեցիկ մարդը, որ ներկայացել է դարխանէում, տեղական շէյխ-իւլ-իսլամն է եղել, որը միևնոյն ժամանակ քաղաքի անջումանի նախագահն է։ Երկրորդ օրը ներկայացել է թիւրքական շահ-բէնդէր Միրզա-Շէրիֆ էֆէնդին և յանձնել է արտասովոր բանալիները։ Եւ դրանով էլ վերջացել է արքայազն իշխանի ընդունելութիւնը, որ մի չը տեսնված ցոյց է, մանաւանդ քիւրդերի վերաբերեալ։ Այն ինչ՝ ընդունված սովորութեան և օրէնքի համաձայն, երբ մի արքայազն նշանակվում է դատաւոր, ամբողջ Քիւրդստանի աղաները խմբվում են Սօվուջ-Բուլաղ. նոյնիսկ ամենաազդեցիկներից շատերը 4—500 ձիաւորներով ընդառաջ են գալիս մինչև Բինաբ. քաղաք հասնելուց ընդառաջ գնացողների թիւը 10,000-ից անցնում է և զենվում են հարիւրաւոր զոհեր։ Երկրորդ օրը ամբողջ աղաները «սալամի» են գնում և ընծաների թիւը երբեմն 20—30,000 թումանից անցնում է։ Եւ այդ բոլորի փոխարէն շահզադէն բաւական է համարում մի «ահեալ փօրսիդ» անել։ Ահա այդ անպատուաբեր ընդունելութեան որպէս պատիժ՝ իշխանը հրամայում է իսկոյն և եթ 10 թնդանօթ դնել մօտակայ Դաշ-մէչիթ բլուրի վրա 1000 զինւորներով։ Այդ իսկ օրից միանգամայն փակվում է Սօվուջ-Բուլաղ—Միանդաբեան ճանապարհի հաղորդակցութիւնը և ամեն գործողութիւն թաղնվում է խաւարի մէջ... Այդտեղից է, որ սկսվում է «ասում են»-ների շարքը և որ ցաւալին է՝ միշտ ի վնաս աչէմների։

Մենք առ այժմ ստիպված ենք իշխան Ֆարման-Ֆարմային՝ թողնել այդ խորհրդաւոր վարագոյրի ետևում թագնված և վերադառնալ սահմանին մօտիկ վայրերում [illegible] տեմբերեանների ձախակողմեան խմբակը ևս: Նրա կարծիքով, կարելոյն չափ պէտք է պակսեցնել այն կանցելեարշչինան, որը հոկտեմբերեանների թեթև ձեռքով սկսել է զարգանալ Դումայի ներքին կեանքի մէջ:

◆ Հոկտեմբերի 17-ի պարլամենտական ֆրակցիայի անդամները, ոչ միայն ձախակողմեանները, այլ և աջակողմեանները, սաստիկ դժգոհ են կուսակցութեան լիդեր Ա. Ի. Գուչկովից: Նրանք կշտամբում են նրան այն բանի համար, որ նա միջոցներ չէ ձեռք առնում 1) ֆրակցիայի անդամներին համախմբելու և, 2) ֆրակցիայի գործունէութիւնը ծառայեցնելու կուսակցութեան ծրագրի իրագործման համար: Նա ոչ միայն չէ անում այդ, այլ և, ընդհակառակը, աւելի ու աւելի է աշխատում շեղել կուսակցութիւնը իր ծրագրից:

◆ Ժողովրդական ազատութեան կուսակցութեան պարլամենտական ֆրակցիայի վերջին նիստում Դումայի մատենադարանական մասնաժողովի նախագահ պրոֆ. Լուչիցկին հետևեալ ուշագրաւ յայտարարութիւնն է արել: Արտասահմանից Դումայի մատենադարանական մասնաժողովի անունով ուղարկվող բոլոր գրքերը ստացվում են դրոշմած: Լուչիցկու կարծիքով, դա ապօրէնութիւն է: Օրէնքի համաձայն՝ կենտրոնական բոլոր կառավարչական հաստատութիւնները, բարձրագոյն դպրոցներն ու դպրոցական հաստատութիւնները իրաւունք ունեն ստանալ արտասահմանում լոյս տեսնող բոլոր հրատարակութիւնները առանց ցենզուրայի ենթարկվելու: Այդ հաստատութիւնների առաջնակարգ կաթեգորիայի շարքը կարելի է դասել Պետական Դուման: Հաւանօրէն այդ առիթով հարցապնդում կանվի Դումայում: («Рус. Слово»)

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Յունվարի 16-ին, Թիֆլիսում, 2-րդ հաշտարար բաժնում քննվեց Ելիզավետա Իվ. Ռոտինովայի գործը, որ մեղադրվում է երաժշտական խանութ ունեցող Ի. Սուզանաշեանի կառավարիչ Գր. Իվ. Կապլանսկուն վիրաւորելու մէջ: Դատարանը տ. Ռոտինովային մեղաւոր ճանաչեց և դատապարտեց 4-օրեայ բանտարկութեան: Մեղադրեալին պաշտպանում էր երդ.-հաւ. Իզբաշեվը: Ռոտինովան գործը յանձնում է նահանգական դատարանին:

Յունվարի 18-ին Թիֆլիսի նահանգական դատարանը քննեց Մամիկոն Քարտաշեանի գործը, որ մեղադրվում է Շուլավէրի սանուէր Վախտանգ Մեհրաբեանի կեանքի դէմ մահափորձ կատարելու մէջ: Մեղադրողը ապացուցեց, որ մեղադրվողը մահափորձը կատարել է կանխամտածված, իսկ պաշտպան երդ.-հաւատ. Տուրկեվիչը պնդեց, որ յանցանքը կատարվել է ոչ կանխամտածօրէն, այլ ինքնամոռացութեան դրութեամբ:

Դատարանը մեղադրվող Քարտաշեանցին դատապարտեց տաժանակիր աշխատանքների երկու տարի և ութ ամիս ժամանակով:

ՍՈՒԲՍԻԴԻԱ ԲԱԳՈՒԻ ՆԱՒԹԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻՆ

«Торг. Пром. Газ.»-ն հաղորդում է, որ 1905 թ. ջարդերից յետոյ նաւթահանքերը վերականգնելու համար՝ նաւթարդիւնաբերողներին տրվող նպաստները պետական գանձարանը այժմ դադարեցրել է: Յիշեալ գործի համար, մինիստրների կոմիտէտի 1905 թ. նոյեմբերի 11-ի Բարձրագոյն հաստատված որոշման համաձայն, նշանակված էր բաց թողնել ընդամէնը 20 միլիօն րուբլի: Այս գումարը որոշված էր համապատասխան նաւթարդիւնաբերողների փաստաթղթերի և տեղեկութիւնների, որոնց և վերջում քննեցին տեղական իշխանութիւնները: Իսկապէս, յանձնված ամբողջ գումարը եղաւ 12,423,340 րուբլի: Սկզբում որոշած գումարից այդքան շատ կրճատումը բացատրվում է նրանով, որ վնասված և իրանց վնասների մասին յայտարարութիւններ տուած 160 ֆիրմաներից փոխատուութիւն ստացան միայն 94-ը, որով նրանցից երեքին տրված է համապատասխան այն գումարների, որ նշանակված էին նախկին երեք ֆիրմաներին, որոնք և միացան նրանց հետ, 14 ֆիրմաներ իրանք հրաժարվեցին փոխատուութիւնից, 49 ֆիրմաների մերժեցին և ապա շատ ֆիրմաների տուեցին շատ չնչին չափով, հակառակ կրած վնասների: Մերժելու և փոխատուութիւնները կրճատելու պատճառ ծառայել են. կորստի աննըշան լինելը, այն, որ այն ֆիրման, որին տրվում է փոխատուութիւն, վերադարձնելու քիչ շանսեր ունի իր գոյքի սակաւութեան պատճառով, նախկին 2 տարիների ընթացքում ջարդերի պատճառով ֆիրմայի աղքատանալը, վերջապէս, նաւթարդիւնաբերողի սեփական կարողութեան չափը՝ նաւթահանքը վերականգնելու համար: Տրված ամբողջ գումարից 10,234,940 րուբլին ընկնում է նաւթարդիւնաբերողներին, 1,280400 րուբլին՝ կապալառուներին, նաւթային խողովակների տէրերին՝ 8 հազար րուբլի, նաւթարդիւնաբերողների համագումարի խորհրդին 900 հազար րուբլի:

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻ ԳԱՒԱՌԻ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք. 1) Անդրկասպեան երկրի Արտիկ կայարանից, Ս. Վ. Մարութեանից—58 ր. 25 կ., 2) Բագուից, Բալախանուց, Ն. Ղ.-եանից—50 րուբլի:

ԹՈՒՐՔԱՀԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Բագուից, Խաչատուր Թադէոսեանից, ի յիշատակ հանգուցեալ Վ. Մութաֆեանի, պսակի փոխարէն—75 րուբլի:

ԿՈՎԿԱՍԻ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Բագուից, Խաչատուր Թադէոսեանից, ի յիշատակ հանգուցեալ Վահրամ Մութաֆեանի, պսակի փոխարէն 75 րուբլի:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիսի նահանգապետը տեղեկանալով տեղական լրագիրներից, որ դումայի վերջին նիստում, վերնասրահում ժողոված հասարակութիւնը անվայել է պահել իրան, ծափահարել է մի քանի ձայնաւորների և սուլել է միւսներին և այլն և դրանով խանգարել է դումայի պարապմունքները, ուստի յունվարի 18-ին առաջարկեց քաղաքագլխին՝ արհեստանոցների ծառայողների նորմալ հանգիստը որոշող պարտադիր որոշումները քննելու ժամանակ թոյլ չը տալ հասարակութեան՝ վերնասրահը և դահլիճը: Այս կարգադրութիւնը չէ վերաբերում լրագիրների ռեպորտեօրներին, որոնք գըրում են դումայի հաշւետուութիւնը: Ի նկատի ունենալով այս հանգամանքը, քաղաքային վարչութիւնը մտադիր է դումայի դահլիճը մտնելու ժամանակ պահանջել լրագիրների վկայականներ այն ռեպորտեօրներից, որոնց ինքը չէ ճանաչում, որովհետև լրագիրների աշխատակցի պատրուակով վերջին ժամանակներս, 1905—1906 թ. թ., ռեպորտեօրների տեղը գրաւում են բոլորովին կողմնակի անձինք: («К.»)

◆ Հանքային Ջրերի վարչութիւնը անգլիական երկու խոշոր ֆիրմաների, այն է՝ Տօրդօնին Լօնդօնում և Մարտէնսին՝ Նիւ-Կեաստլում, յայտնել է այն պայմանները, որոնցով կարելի է «Էսէնտուկիի № 20 Նարզանը» արտահանել Անգլիա: Բացի դրանից, աւելի աջող տարածման նպատակով և կովկասեան հանքային ջրերը արտասահմանում սպառելու համար ջրերի վարչութիւնը հրաւիրել է մի քանի կոմիսարների՝ վարչութեան և արտասահմանի՝ ֆիրմաների միջև միջնորդ հանդիսանալու համար:

◆ Թիֆլիսում վերջերս 4-րդ իգական գիմնազիայի կից բացվեցին կրթական-նահանգական դասընթացքներ (учебно-окружные курсы), որ նպատակ ունեն պատրաստել այն անձերին, որոնք կամենում են ստանալ միջնակարգ դպրոցներում ձեռագործի դասաւանդուհու կոչում: Այս դասընթացքները սկիզբ առան Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու Ռուդոլֆի նախաձեռնութեամբ և կառավարելու է տ. Բաստամօվան: Այս դասընթացքներում պարապմունքները լինելու են երեկոները (ժամը 5—8), որպէսզի նրանք, որոնք ցերեկով զբաղված են և ցանկանում են լըրացնել իրանց տեխնիքական կրթութիւնը, լիակատար հնարաւորութիւն ունենան օգտվել նրանցից: Աւանդվելու են հետևեալ առարկաները. մեթօդիկա, ձեռագործ, հաշւապահութիւն, նկարչութիւն, գծագրութիւն, առողջապահութիւն և այլն: Դասընթացքը միամեայ է, 50 րուբլի վճարով:

◆ Գուրիայից «Зак.» լրագրին հաղորդում են, որ այնտեղ առատ ձիւն է եկել: Գիւղերում բուն են դրել զանազան վարակիչ հիւանդութիւններ՝ ծաղիկ, քութէշ, կարմրուկ և այլն:

◆ Մօտ օրերս Վլադիկավկազի երկաթուղու կայարանում ժանդարմները ձերբակալել են երեք արկղ ռազմամթերքներ, 3—4 գծանի հրացաններ և 12,000 փամփուշտներ: Ապրանքը ուղարկված է եղել Պետերբուրգից:

◆ Էջմիածնից գրված մի նամակով մեզ յայտնում են, որ յունվարի 12-ին, երեկոյեան, ճեմարանի սաներից հինգ հոգի գընում են Ղազարապատ: Ապա քէֆ անելով դուրս են գալիս Ղազարապատից և, երգելով զանազան անվայել երգեր, գալիս են ճեմարան: Մանկավարժական ժողովը, քննելով գործը, մեղաւոր է գտնում յիշեալ աշակերտներին, և որովհետև առաջ էլ մի քանի անգամ նոյնանման անկարգութիւնների մէջ բռնվել են, ուստի արձակում է այդ տղաներին ճեմարանից:

◆ Ժողովրդական համալսարանների ընկերութիւնը իր միջոցները աւելացնելու նպատակով բարեկենդանին մտադիր է պարահանդէս կազմել:

◆ Առաջիկայ կիրակի, յունվարի 27-ին, Կարմիր Խաչի ընկերութեան գլխաւոր վարչութեան շինութեան մէջ (Ինժեներնայա, № 9) նշանակված է Կարմիր Խաչի ռուսական ընկերութեան անդամների արտակարգ ընդհանուր ժողովը:

◆ Համաձայն Թիֆլիսի նահանգապետի պահանջի, քաղաքային վարչութիւնը պաշտօններից արձակել է առևտրա-տնտեսական վերակացու Ռօխլինին և քաղաքային ջրանցքի կօնտրօլեօր Բիսէլիձէին:

◆ Վաղը, երկուշաբթի, յունվարի 21-ին, Թիֆլիսի դուման քննելու է հետևեալ հարցերը. 1) արհեստանոցների ծառայողների նորմալ հանգստեան պարտադիր կանոնների խնդրով զբաղվող մասնաժողովի զեկուցումը, 2) վարչութեան զեկուցումը քաղաքի ջրերը պաշտպանող պահակախմբի ծախքերի և ջերմուկախօսական կայարանի միջոցները ուժեղացնելու մասին, և այլն:

◆ «Зак.» լրագրին Սէվաստոպոլից գրում են, որ յունվ. 15-ի և 16-ի խուզարկութիւնները Շտալբէրգի տանը երևան հանեցին մի քանի գնդակացիրներ, 27 հրացան և շատ փամփուշտներ: Գնդակացիրները գողացված են եղել «Զօրկի» յածանաւից, իսկ հրացանները՝ բերդի նաւահանգստից: Տան տէրերը ձերբակալված են դեռ դեկտեմբեր ամսից, մեղադրվելով ռումբեր պատրաստելու և պահելու մէջ:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Յունվարի 18-ին, երեկոյեան ժամը $7^1/_2$-ին, Նիկօլաևսկի փողոցում, «Իտալիա» հիւրանոցի դիմաց, անյայտ չարագործներ ատրճանակի 6 հարուածով սպանեցին որոշ պարապմունք չունեցող և բացառապէս թղթախաղով պարապող Իվան Վարամաձէին: Դիակը ուղարկվեց Միքայէլեան հիւանդանոցը: Նրա մօտ գտնվել է «Սմիթ և Վիսօն» սիստեմի ատրճանակ: Սպանողներին բռնելու համար ոստիկանութիւնը միջոցներ է ձեռք առել:

◆ Յունվարի 18-ին, երեկոյեան ժամը 8-ին, անյայտ չարագործներ, Մօսկօվսկայա և Իզմայիլօվսկայա փողոցների անկիւնում, անաջող մահափորձ կատարեցին թաղական վերակացուի կեանքի դէմ, որ կանգնած էր Օլգենսկի փողոցի բերանում: Գնդակը դիպաւ պատահմամբ անցնող Եւգենի Լիշինուն, որին թեթև վիրաւորված տարան Միքայէլեան հիւանդանոց:

◆ Յունվարի 18-ին, ցերեկվայ մօտ ժամը 1-ին, նահանգական բանտի բակում, արտաքնոցում գտել են մահացու կերպով վիրաւորված բանտարկեալ Լևոն Սահակօվին: Նրան մի քանի տեղից դանակով վիրաւորել են: Սահակօվին իսկոյն բժշկական օգնութիւն են հասցրել, բայց Սահակօվը մի քանի րոպէից յետոյ վախճանվել է: Սահակօվի սպանութեան մէջ կասկածվում է բանտարկեալ Ալէքսանդր Բերիջանովը, որը քննութեան ժամանակ հագած է ունեցել շալվարը թարս երեսից, ուրիշի պիջակ: Բերիջանովի թախտի տակ արեան նշաններ են եղել, իսկ մի ուրիշ թախտի տակ գտել են Բերիջանովի սպիտակ շալվարը արիւնաթաթախ:

◆ Յունվարի 18-ին, Ելիզավետինսկի փ. № 126 տան մէջ գտնվող փուռը մտել են 6 զինված չարագործներ և վերցրել են 20 ր. փող և 2 ժամացոյց, անյայտացել են:

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

◆ Բիբի-Հէյբաթի նաւթահանքերի շըրջանի մահմեդականների ընտրեալները յունվարի 16-ին նաւթարդիւնաբերողների XXV համագումարի նախագահի անունով մի խնդրագիր ներկայացրին, որով մատնանշում են, որ դեռ 1906 թւականից նրանք միջնորդում են խորհրդի առաջ, որ Բիբի-Հէյբաթում մահմեդական բանւորների համար մզկիթ կառուցվի, որ մի հողաբաժին յատկացվի գերեզմանոցի համար, դիակառք գնվի և նաւթային շրջանի մոլլաներին բնակարանի վարձ և ռոճիկ տրվի: Բայց մինչև օրս բոլոր այդ միջնորդութիւնները առանց հետևանքի մնացին: Այժմ ընտրեալները խնդրում են նախագահից այդ հարցին վերաբերվել արդարութեան տեսակէտից և նպաստել գոհացումն տալու մահմեդական-բանւորների կենսական հոգեկան պահանջներին:

◆ Ոստիկանութեան տեղեկութիւնների համաձայն, այժմ Բագուի քաղաքապետութեան շրջանում գործադուլ բանւորների թիւը հասնում է 240 հոգու:

◆ Յունվարի 16-ին, ցերեկվայ ժամը 4-ին, նախկին Գ. Արաֆելօվի նաւթահանքի բանւորները և վարպետները դադարեցրին աշխատանքները և մի շարք տնտեսական բնաւորութիւն ունեցող պահանջներ առաջադրեցին իրանց տէրերին: Գործադուլ բանւորների թիւը 32 է:

◆ Բագուի քաղաքագլուխը յունվ. 17-ին Բագուի քաղաքապետին մի յայտարարութեամբ խնդրել է հաստատել քաղաքային վարչութեան անդամութեան մէջ առաջիկայ նոր քառամեակի համար ինժեներ-տեխնոլոգ Հայկ Գր. Գեանջեցեանին և Արշակ Ղուկասեանին:

◆ Քննութիւնից պարզվել է, որ նահանգական իշխանութեան ցենզուրայի հրամանով, բացի «Кавказъ» լրագրից, արգելվել է միւս բոլոր լրագիրների մուտքը ոչ միայն արական գիմնազիայում, այլ և արական պրոգիմնազիայում:

◆ Բագուի քաղաքապետը թոյլատրել է Հ. Կալինինուն բանալ Բալախանում «Знаніе» (Գիտութիւն) անունով գրավաճառանոց, հանդերձ դասական պիտոյքներ և դասագրքեր վաճառելու իրաւունքով:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ եկեղեցիներ կողոպտելու դէպքերը հետզհետէ բազմանում են, ներքին գործերի մինիստրութիւնը համաձայնութիւն է ուզում կայացնել ռուսաց սինօդի հետ տեղական եկեղեցական ծուխերի հաշւով, եկեղեցիների պահպանութեան համար, կանոնաւոր զինված պահակներ կազմակերպելու մասին: Պահակների թիւը այդ նպատակով կաւելացվեն և նրանց կը վարժեցնեն հրացանաձգութեան: («Слово»)

◆ Սարատովից հեռագրում են «Р. Сл.» լրագրին, որ սահմանադիր-ռամկավարների կուսակցութեան տեղական բաժանմունքը Կօլիւբակինի դատը պաշտպանելու համար հրաւիրում է Դումայի անդամներ Պերգամենտին, Մակլակօվին և Մասլենկօյին:

◆ Ֆինլանդական գեներալ նահանգապետը հաւանութիւն է տուել և ներկայացրել է ի հաստատութիւն սենատի կարծիքը գեներալ-նահանգապետի դիւանատան կից նշանակված առանձին յանձնարարութիւնների պաշտօնեաների թիւը կրճատելու մասին: Սենատը որոշել է միանալ սէյմի որոշումներին՝ երկաթուղային երթևեկութիւնը կիրակի և տօն օրերը սահմանափակելու մասին: Միևնոյն ժամանակ ընդունել է տարեկան 20,000 մարկ Հելսինգֆորսի բանւորական թատրօնին յատկացնելու որոշումը, այն պայմանով միայն, որ վերջինս այդ նպաստից օգտվի երեք տարի միայն: Լապլանդիայի տնտեսական պայմանները ուսումնասիրելու համար նշանակված մասնաժողովը եկել է այն եզրակացութեան, որ տնտեսական վիճակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է երկաթուղային գիծ անցկացնել: («Р. Сл.»)

◆ Արժանահաւատ աղբիւրից «Р. Сл.» լրագիրը տեղեկացել է, որ գեներալ Ստեսսելը Թագաւոր Կայսրին խնդիրք է ներկայացրել և բողոքել դատարանի դէմ՝ իր դէմ քննութեան ժամանակ գործադրվող ճնշումների համար: Խնդիրքը ուղարկված է բարձրագոյն դատարանին:

◆ Պետերբուրգի քաղաքապետի կարգադրութեամբ դադարեցված են «Нашъ Вѣкъ» (Товарищъ), «Сегодня», «Свобода» և «Народное слово» լրագիրները: Կալանաւորված է Պետերբուրգից աքսորված պատմական «Былое» ամսաթերթի խմբագիր Շչեգօլևը: («Касп.»)

◆ Սարատովում տեղական ռուս ժողովրդի միութեան անդամները մեծ հանդիսաւորութեամբ ճանապարհ են դրել Գերմօգեն եպիսկոպոսին դէպի Պետերբուրգ: Գնացքը տեղից շարժվելուց յետոյ եպիսկոպոսը նկատել է, որ գողացել են իր մօտ ունեցած հազար րուբլին և ոսկէ ժամացոյցը: Սարատովի ոստիկանութիւնը ոտքի է կանգնել գտնելու համար աւազակներին: («Г. М.»)

◆ «Berl. Tageblatt» լրագրի Պետերբուրգի թղթակիցը հաղորդում է հետևեալ սենսացիօն տեղեկութիւնը, որ, իբր թէ, Ռուսաստանի և Ամերիկայի միջև դաշինք է կայանալու: Արժանահաւատ աղբիւրներից նա իմացել է, որ այդ ուղղութեամբ առաջին քայլերը արդէն արված են և որ առաժմ ձգձգելու պատճառ է դառնում ռուսական նաւատորմի տկարութիւնը: Այդ համաձայնութեան նպատակն է հակազդել անգլօ-ճապօնական համաձայնութեան:

◆ Արժանահաւատ աղբիւրից հաղորդում են, որ Ազով-Դոնեան առևտրական բանկը բաց է թողնում 10 միլիօն րուբլու արժողութեամբ օբլիգացիաներ: Այդ օպերացիայից յետոյ բանկի հիմնական դրամագլուխը կը հասնի մինչև 25 միլիօն րուբլու: («Р. С.»)

ՖԷԼԻԵՏՕՆ

Նա

Պահանջում է, որ իրան խնայենք և, եթէ կարելի է, կիրակից կիրակի լուրջ ու տխուր նիւթերից երբեմն իրան ազատենք:

Առաւօտից մինչև իրիկուն շարունակ հէնց այս եմ լսում.

Գողացան, հրացան, գնդակ, ատրճանակ, յարձակվեցին, վիրաւորեցին, կողոպտեցին, սպանեցին, փախել, կախվել, գնդակահար են եղել...

Մի խօսքով՝ այս գարշելի, արիւնածարաւ բառերից չը գիտես ուր փախչես, որ մի րոպէ ազատվես:

Համաճարակ խօլերան ու ժանտախտը ոչինչ բաներ են այս բառերի առաջ:

Հէնց միմիայն «գնդակ ու ատրճանակին» օրական միջին թւով հարիւր հոգիներ են զոհ գնում:

Զոհերից շատերը որովհետև միմեանց արեան ծարաւ, առողջ հայ երիտասարդներ են և սիրահարներ բոլշևական մահին, քան ապրելու հիւանդութեան, այդ պատճառով էլ բժիշկները այժմ մեծ վնասի մէջ են:

Եթէ այսպէս քիչ էլ շարունակվի, նրանք վճռել են բժշկութիւնից հեռանալ և տէրտէրներ դառնալ:

Եւ որովհետև սեզօնը թաղման սեզօն է, ուստի մեկին տասը գնով էլ «Մաշտոց» չէ ճարվում ոչ մի գրախանութում:

Օրըստօրէ դեղատները փակվում, դագաղի խանութներն են ծաղկում ու բացվում:

Մաթեմատիքական հաշիւները ցոյց են տալիս, որ մի տարուց յետոյ դեղ ու ճարի համար մի հատ հայ երիտասարդ չէ մնալու. ուզում է անունը լինի դաշնակցական, անջատական, էս-էր, էս-դեկ, ալանչի, բալանչի, թէ թալանչի—այդ միևնոյն է:

Թէև կան պնդողներ, որ Զուլուների թէ՝ չը գիտեմ «Վայ-Զուլօների» աշխարհում, եթէ չեմ սխալվում, նրանց Տրապիզօն քաղաքում այդ վերջին տեսակներից շատ շատերն են բուսնում, որպէս թէ այնտեղից կարելի է նորից բերել տալ,

Սակայն վախկոտներն ասում են. «Եթէ բերել տանք, Թուրք աղաներն ու բէկերը էլի մի «օյին» կը բերեն իրանց գիւղականների և մեր գլխին»:

Բայց ես կարծում եմ և համոզված եմ, որ այդ Թուրքերը այնքան էլ կոյր չեն, որ չը տեսնեն, թէ հայ երիտասարդները իրար կոտորելու համար են ստեղծված, և ընդհանուր՝ միմեանց արիւնը թափելու.... եթէ չասենք խմելու...

զօրդակցութիւնը և 4-5 գիւղերի վրա սոսկալի աւերմունք, աւար և սպանութիւններ է կատարում:

Իսկ սահմանից այս կողմ, դէպի Միանդաբ և այնտեղից Ս.-Բուլաղ նորանոր ոյժեր են գնում: Դեկտ. 23-ին Մարաղայից քաղաքս եկան 500 փօլադլի ձիաւորներ, որոնք մի գիշեր մնալով քաղաքումս՝ ճանապարհվեցին Միանդաբ. այնտեղ արդէն սպասում էր նրանց 150 ուղտաբեռ ռազմամթերք, 50 բեռ կենսական մթերք և 20 բեռ դրամ, որը պիտի Ս.-Բուլաղ հասցնէին այդ 500 ձիաւորը. և այդպէս էլ լինում է. 25-ին ճանապարհվում են և... դառն իրողութիւն, Խաթուն-Բաղի կիրճում 200 քիւրդ ձիաւորներ յարձակվում են ու շատ «սսում են»-ների տեղիք տալիս. իրողութիւնը այս է միայն, որ այդ 220 բեռից 100 բեռը հազիւ է հասնում քաղաք, դեռ չը հաշւած մօտ 30 սպանվածներ: Դրա հետ զուգընթաց, թերևս նոյն օրը, մի սոսկալի կոտորած է լինում և Թաթաւ գետի եզերքում, Հաջի-Հասան-Թալաւ գիւղում. զոհերի թիւը հասնում է մինչև 1200-ի: Դէպքը տեղի է ունենում այսպէս: Սարդարը-Մօխբէզիրը, կատաղած այն հանգամանքից, որ մի շաբաթ է իշխան Ֆարման-Ֆարմայից տեղեկութիւն չէ ստացվում, և զայրացած այն չարաշշուկ լուրերից, որ իշխանը պաշարված է, 50 ձիաւորով անցնում է դէպի Ամիրաբադ, ուր բանակ էր դրել Փարվիզ խան Սարհէնգը, գոնէ նրանից մի լուր իմանալու համար. Թաթաւի միւս ափին վրանաբնակ շուգագների մի խումբ խնդրագիր է ներկայացնում սարդարին, որ Հաջի-Հասան-Թալաւի քիւրդերը իրանց հանգիստ չեն տալիս, ամեն գիշեր յափըշտակում են նրանցից աւար և նոյն իսկ կանայք. սարդարը կատաղում է և ճանապարհից թեքվում դէպի այդ գիւղը և մի քանի ժամվայ մէջ կոտորում 30 հոգի ու աւարի մատնում գիւղը և երեկոյեան հազիւ վերադառնում է Փարվիզ խանի մօտ: Միանդաբի և շրջակայքի բնակիչները լսելով այդ յաղթական լուրը՝ մօտ 2000 հոգի, որոնց մէջ և 200 զինւորներ, գիշերով արշաւում են դէպի աւար, սակայն, հէնց գիւղի մօտ դրանց վրա են յարձակվում 40-ի չափ քիւրդ ձիաւորներ և սկսում անխնայ կոտորել: Պատմում են, որ քիւրդերը ափսոսալով փամփուշտներին՝ սրամերկ մտնում են ամբոխի մէջ և սարսափելի կերպով կոտորում, այնպէս որ այդ 2000 հոգուց հազիւ 6—700 հոգի փախչում է. դրանց մէջ են լինում և 30 հայեր, որոնցից սպանվում է 2 հոգի: Քիւրդերը այդ կոտորածից տանում են 300 հրացան (200-ը զինւորական վարանդել հրացան) և մօտ 10,000 փամփուշտ, բացի կարևոր հագուստներից և սրբերից:

Դրութիւնը այսպէս էր մինչև դեկտեմբերի 28-ը, երբ ես պատրաստվեցի 29-ի պոստով մեկնել Մարաղայից դէպի Թաւրիզ: Մի կարևոր խնդրի համար այդ գիշերը ես գնացի հեռագրատուն. մի խղճալի տեսարան ներկայացաւ ինձ. հեռագրատան սենեակում նստած էին Մարաղայի առաջաւոր մարդիկ, մօտ 30 հոգի, որոնց տխուր և յուսահատ դէմքերից ես գուշակեցի ոչ ուրախալի լուրեր. ես դիմեցի իմ բարեկամներից մէկին, պօստատան կառավարչին և խնդրեցի բացատրել ինձ այդ սգաժողովի պատճառները. Նա ականջիս ասաց հետևեալ տխուր խօսքերը. «Լաւ ես անում որ գընում ես. գնա այս վտանգի վայրից. սարդարը-Մօխբէզիրից հեռագիր է ստացվել, որ՝ հաւանականաբար Ֆարման-Ֆարման պաշարված է. Փարվիզ խանը յետ նահանջել և այժմ ինձ մօտ է. մենք դիրքերում պատրաստվում ենք կռւելու. դուք քաղաքի պարիսպները և դռները ամրացրէք և զգոյշ կացէք. ով գիտէ ինչեր պիտի տեղի ունենան. ինձ հալալ *) արէք»:

Ես մեկնեցի Մարաղայի տխուր խոհերի տակ. ճանապարհին աւելի ևս յուզվեցի, երբ պատահեցի շահզադա Իմամ-Ղուլի-Միրզայի մի ձիաւոր սուրհանդակին, որ սրարշաւ գնում էր դէպի Թաւրիզ. ծանօթ էր ինձ այդ մարդը. խնդրեցի այդ շտապելու պատճառը և նոր տեղեկութիւններ. Նա վառեց մի պապիրոս և ասաց հետևեալը. «Չը գիտեմ շահզադան ինչ է գրած ինձ յանձնված նամակում, միայն ինձ պատուիրել է ասել Թաւրիզի անջումանին և փոխանորդ Մանուչէհր Միրզային, որ եթէ անմիջապէս Ս.-Բուլաղ չը հասցնեն նոր և շատ կռւող ոյժեր, այնպիսի մի խայտառակ դրութեան պիտի հասնենք, որ ամբողջ աշխարհի մէջ պիտի անպատիւ լինենք»: Ես պատմեցի սարդարի հեռագրի բովանդակութիւնը. Նա մի խոր հառաչեց և աշտանակեց ձիուն...

Մ. Տէր-Յակովբեան

---

*) Պարսիկների մէջ մի սովորութիւն կայ. երբ մէկը զգում է իր մօտալուտ մահը՝ նա իր շրջապատին և բարեկամներին ասում է. «ինձ հալալ արէք», այսինքն ինչ լաւ ու վատութիւն որ ինձանից տեսել էք՝ ներեցէք:

Բայց ներողութիւն, որ մոռացայ և բուն խնդրից շատ հեռացայ։

Նա,

Ինչպէս ասացի, պահանջում է, որ մէկ-մէկ էլ քիչ ուրախ նիւթերի մասին խօսվի։ Հէնց այդ պատճառով էջմիածնի գանձարանից էլ առաւել ծանր դրութեան մէջ էի գտնում ինքս ինձ։

Մտածում էի՝ ո՞րտեղից գտնել պոչհատական այն ուրախ տրամադրութիւնը, որ մի րոպէ մոռանայի մեր սոսկալի կեանքը և նրա հետևանք՝ կաշկանդող, սպանիչ տրամութիւնը։

Ճիշտ այդ դրութեան մէջ էի Հին—մեռնող և Նոր—ծնվող տարվայ գիշերը։ Շատ աշխատեցի տրամադրութեանս հակառակ մի նիւթ գտնել ուրախալի, բայց գրիչը իմ ձեռքում առաջ չէր գնում. այս կողմն էի նայում՝ ցաւալի, այն կողմն՝ վշտալի։

Ուրիշ բան էր, եթէ ասէր.

— Արի, մի ողբ գրի։

Կը գրէի, այնպէս սրտառուչ ու հիանալի, որ իմ ողբի մօտ երեմիականը դուրս կը գար երրորդ Դումայից անալի, եթէ չասենք աւելի։

Այս տրամադրութեամբ կարո՞ղ էի ուրախանալ։

Նոր տարվայ առիթով, ասացին, պէտք է գիտմամբ կուրանալ։

— Ի՞նչպէս թէ։

— Քիչ այսպէս, «կռամպամպուլի» կանչիր ու նրան տես։

«Կռամպամպուլին» այն օղին է, որ «խռկաններին» քաջ ծանօթ է...

Մէկ խօսքով, թէ պէտք է կոնծել։

— Լա՛ւ, յետո՞յ։

— Յետոյ ատրճանակը վերցնել, քեզ տխրութիւն պատճառող հին տարուն մէկ լաւ գնդակահար անել, սպանել...

— Սպանե՞լ։

— Ա՛յնպէս, որ գնալը լինի, էլ գալը չը լինի։

— Եթէ հին տարին լեզու ունենար Խիկարի պէս ձեզ կասէր. ո՜վ մասխարա։

Տարին լինի թէ հին, թէ նոր,
Դուք չէք տեսնի գեղեցիկ օր,
Մինչ կամազուրկ կը մնաս ընդմիշտ՝
Լոյսից հեռու, խելքից տկլոր...

Նա ձեզ կասէր. ամօթ ձեզ, մեծ-մեծ մարդիկ, որ երեխաներ դարձած, մանուկից դաժան ծերուկ և ծերուկից նախշուն ու սիրուն մանուկ դարձնելով էք զբաղված։

Որ դուք խօսքով արդարութիւն, եղբայրութիւն, քրիստոնէութիւնը կը գովէք, խսկ գործով այդ բոլորը կը հալածէք։

Որ դուք ուրիշից իրաւունք, օրէնք կը պահանջէք, իսկ ինքներդ դրանց ոտի տակ տալով կանարգէք։

Ո՛չ, Նոր-Տարին հէնց լաւ ու երջանիկ դառնալ չէ կարող, եթէ ձեր այլանդակ գործերով կը շարունակէք ճշմարտութիւնը ուրանալ և ստերով ընթանալ։

Ռմբակոծեցէք, սպանեցէք հին տարուն, նորը ձեզ չի բերի գարուն, քանի կենդանի կը մնան ձեր դժբաղդութեան պատճառները, ոչ թէ հին ու նոր տարում, այլ ձեր գործերում։

— Նու, եթէ դու վճռել ես մեր Խիկար իմաստունը դառնալ,—ասացին,—այն ժամանակ խորհուրդ կը տանք այս աշխարհից շուտ հեռանալ։ Այս մեր երկրում ապրե՞լ կուզես։ Հէնց որ ծնվեցիր, շուտ ջանք արա, երկու աչքով կարգին կուրացիր։

Նա

Շատ էլ պահանջում է, թէ երկու աչքով եկ կուրացիր ու երգիր.

Գարունն է եկել նախշուն թևերով...
Ի՞նչպէս կուրանամ ու երգեմ՝
Գարուն է եկել...

Երբ երգողները երգեցին, երգեցին և մինչև այսօր նրա երեսին կարօտ մնացին,

Երբ այդ գարունը մահվան թևերով, դաշոյն-գնդակով ու մաուզէրներով, մեր մայր ու քոյրերին թողեց սևերով և արցունք հոսեցրեց վտակներով,

Ո՞րն է գարունը. միթէ մեզ հեղեղող արիւնը։

Լա՛ւ, երկու աչքով էլ կուրացայ.
Ձէ՞ որ ականջներ կան, չը խլացայ.
Ի՞նչպէս չը լսեմ «դիակների բողոքը»,
Ի՞նչպէս լսեմ սիրտ կտրատող մորմոքը,
Նրանց հառաչանքը, նրանց աղերսանքը,
Սովից ու ցրտից նրանք հեկեկանքը։

— Ո՛չինչ,—ասացին,—քիչ «քցիր» և կը կուրանաս, և կը խլանաս, և ամէն բան կը մոռանաս։

Ձը գիտեմ, գուցէ բոլոր ժամանակ այդպէս են անում մեր կուրացած երջանիկները և խլացած քաջերը, բայց

«Ինձ համար չէր գարնան գալը»,

Եւ նրա պահանջած ֆէլիէտօնն ու ուրախանալը։

Վճռեցի ոչինչ չը գրել.
Գրիչը դէն ձգեցի և փորձեցի քնել։
«Սակայն իմ թաց աչքիս,
Քունը մօտ չէր գալիս»։

Մոծակ Մտրակեան

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—$9\frac{1}{2}$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕԴՆԵՎԱ—$9\frac{1}{2}$—2 ժ. ատամի հիւ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—$1\frac{1}{2}$—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացեայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Լոյս տեսաւ
„ԵՐԿՐԻ ՁԱՅՆԻ“ № 3
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սօցիալիստակա՞ն թէ դեմօկրատական III, Տ. Զաւէն. Ռուսական խաբրիկներ (Նամակ Ե.) Թափառիկ. Ամերիկահայ բանւորութիւնը և նրա դերը II, Եսալեմ. Կուսակցութիւնների շուրջը. «Mechveret»-ի դիրքը դէպի Պարիզի կօնգրեսը. Մամուլի շուրջը. Գրական և գեղարուեստական. Դարերու Ամբոցը (բանաստ.) Պ. Տէրտէրեան. Կուլտուրական-տնտեսական կեանք. Բանասիրական. Թիւրքահայերու Ազգային Սահմանադրութիւնը (Ա. գլուխ. ընտրութիւն գաւառական Ընդհ. Ժողովոյ). Ծայրագաւառներում. I Մակեդօնացիներ. II Քիւրդեր. Ի՞նչ է կատարվում երկրում. Ընդհարում զօրքի և ժողովրդի միջև. Նաւատորմիղի զօրեղացումը. Գաղութներում. Բաց նամակ երիտասարդ թիւրքերուն Թիւրքիացի մը. Նամակ խմբագրութեան (Իմ պատասխանը Խանզատին) Գ. Ղարաջեան։

1—1

„ԳՈՒՏՏԷՆԲԵՐԳ“

գրավաճառանոցում տօների առիթով փառակազմ վաճառվում են հետևեալ մանկական գրքերը (գները նշանակված են առանց կազմի. կազմերը արժեն 40—75 կ.).

Սիրտ, աշակերտի յիշատակարանը Է. Դէ Ամիչիսի, ֆրանսերէնից թարգմանեց Փ. Վարդանեան 1 ր.
Արութիւն և Մանուէլ, ազգային վէպ, Ղ. Աղայեանի 60 կ.։
Ռօբինզօն Կրուզօի ճանապարհորդութիւնը և զարմանալի արկածները Դ. Դէֆօէի, թարգմ. Ս. Թառայեանց 1 ր. 25 կ.
Մանկութիւն և պատանեկութիւն Լ. Տօլստօյի, թարգմ. Պ. Պ. 1 ր.
Դաւիթ Կօպպերֆիլդ (պատանեկական հասակների համար) Դիկկենսի, թարգմ. Պ. Պ. 1 ր.
Կեանքի դպրոց, վէպ երիտասարդների համար, Դիկկենսի, թարգմ. Գ. քահ. Աղանեանց 1 ր.
Դասընկերներ, պատանիների ընթերցանութեան համար, Ա. Աննենսկայա, ռուսերէնից թարգմ. Կ. Գիւլնազարեան 50 կ.
Ռէյնեկե աղուէսը Շմիդթի, գերմաներէնից թարգմ. Փ. Վարդանեան 60 կ.։
Փարաւօնի աղջիկը, պատմական վէպ, Գ. Էբերս. փոխադ. Օ. Շ. 80 կ.
Խարագի տղայ կամ երկու ախպերացեղ հէքիաթ, Ս. Քամալեանի 40 կ.
Գուլլիվէրի ճանապարհորդութիւնը, լիլիպուտների և բրոբդինեագցոց աշխարհներում, Ջ. Սուիֆտ, ռուսերէնից թարգ. Ղ. Աղայեան 50 կ.
Առաջին վաստակ, զրոյց պատկերազարդ Մ. Սեմենկա, փոխադրեց Լ. Մելիք-Ադամեանց 40 կ.
Փոքրիկ Ցոլակն ու խլըշիկ Նապաստակը, զրոյց պատկերազարդ, Կօտ Մուռլիկա, փոխադրեց Լ. Մելիք-Ադամեանց 55 կ.
Նապաստակ Խէչանի վրէժխնդրութիւնը կամ ինքդ քեզ օգնիր, զրոյց պատկերազարդ Յ. Մասսօն, փոխադրեց Լ. Մելիք-Ադամեանց 40 կ.
Անդերսընի հէքիաթները, (կազմողի նուէր հայ երեխաներին) հեղինակի պատկերով և կենսագրութեամբ, թարգմ. Ֆրանս. Տ. Զաւէն 50 կ.
Իշխանն ու աղքատը, պատմական վէպ Մ. Տուէն, թարգմ. Գ. Շահբուդաղեան 1 ր.
Նաւի փոքրաւորը կամ պատուիր հօրդ ու մօրդ, Մ. Ռօզենհայն, գերմ. թարգմ. Յով. Լալայեան 15 կ.
Կապիտանի աղջիկը Ա. Պուշկին. Թարգմ. Յ. Կարապետեան 30 կ.
Հողածին և անմեռ աշխարք, Քամալեան Ս. 8 կ.
Նոյնի՝ Հէքիաթներ. 30 կ.
Սիրելի հերոս, Հասան Խանի ժամանակի պատմութիւն, Ս. Քամալեան 25 կ.
Ժամանակը ոսկի. Ս. Քամալեանի 40 կ.
Աստուած չը ճանաչող, Ս. Քամալեանի 10 կ.
Սիրտ գրքից ինն պատմութիւն (10 պատկերով) Է. Դէ Ամիչիսի, թարգ. գերմ. Ս. Քամալեանի. 40 կ.
Սասունցի Յօհան, պատմական վէպիկ Ս. Քամալեանի 30 կ.
Շէն թագաւորի աղջիկը, հէքիաթ Ս. Քամալեանի 25 կ.
Աստուած աղքատի կերպում, զրոյց Ս. Քամալեանի 20 կ.
Գալօ-Աֆօ և Խաչան, Ս. Քամալեանի 12 կ.
Ոսկի ձկնիկ Պուշկին, թարգմ. Գաժառ-Քաթիպայի. 10 կ.

Գրքերը կարելի է ձեռք բերել և առանց կազմի կամ հասարակ կազմերով, այն է հատը 15 կօպէկ։

Առանց կանխավճարի ոչ ոքի գրքեր չենք ուղարկում։

Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ“ Г. Галустянъ. 2—1

Եալտայի ՀԱՅ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ԱՂՕԹԱՏԱՆ

Հինգամսեայ հաշիւը (1907 թ. օգոստոսի 1-ից առ 1-ն յունվարի 1908 թ.)

Մուտք եղել է

Նախկին երէցփոխից ստացել եմ փողով—29 ր. 84 կ.. Աղօթատան փողերը, որ կառավարութիւնը վերցրել էր իր հովանաւորութեան տակ, յետ ստացվեցին և ընթացիկ հաշւով տրվեցին Եալտայի փոխադարձ վարկի ընկերութեան—բանկը 6144 ր. 63 կ.։ Տեղական ծխականներից հինգ ամսվայ ընթացքում ստացված—185 ր. 85 կ.։ Եկւոր հետևեալ անձերից ստացված է՝ Շափշայիկօվից—2 ր., տ. Գ. Գանջունցօվից—5 ր., տ. Րէբիդսկուց—3 ր., Ա. Աֆրիկեանից (ալէքսանդրօպօլցի)—10 ր., Ս. Արզումանօվից (շուշեցի)—5 ր., Տէր-Գէորգեանից—2 ր., Անտօն Բարիլիայ Ֆրանցից—50 կ., Դասունօվից—3 ր., Շափշայիկօվից—5 ր., տ. Շափշայիկօվից—2 ր., Ն. Գրասնիկօվից—3 ր., Դ. Մէլիք-Գասպարեանից—5 ր., Գօմիգէ Վարշավից—3., Իրագլից—50 կ., բագուեցի Սարգիսօվից—3 ր., հրէայ Շվարթից—1 ր. 89 կ., հին-Նախիջևանցի Առաքելօվից—3 ր., Թիֆլիսեցի օր. Ասլամազօվից—1 ր., նոր-Նախիջևանցի տ. Զաբիխեանից—1 ր., պրիստաւ Գայմակամօվից—2 ր., ռուս Դաչենկօյից—1 ր., Գէորգ Քուչնարեանից—2 ր., բագուեցի Բուդաղօվից—5 ր., նոր-Նախիջևանցի Դէրկօվից—1 ր., նոր-Նախիջևանցի Ալաջալօվից —20 ր., շուշեցի Հախումօվից—1 ր., Մ. Հայրապետօվից—1 ր., նոր Նախիջևանցի Պօպօվից—3 ր., աստրախանցի Աւագօվից—5 ր., մոսկվացի Պօպօվից—3 ր., Ճգնաւորօվից—25 ր., մոսկվացի Արտէմօվից—2 ր., Գօչպէրեանից—3 ր., բժ. Թանդօյեանցից—5 ր., արմաւիրցի Տարասօվից—10 ր., մոսկվացի հրէայ Շէրից—1 ր., շուշեցի Եդիգարօվից—2 ր., Շիլկօֆիկօվից—3 ր., երևանցի Խաչատրեանից—50 կ., Գ. Բաղդասարօվից—1 ր., Սագինեանից—1 ր., արմաւիրցի Զաւ.-բէգ Բալուղեանից—10 ր., Յովհ. Ժամհարեանից—25 ր., աստրախանցի Գ. Եզօվից—5 ր.։ Մոմավաճառութիւնից և Գանձակից ստացված է—203 ր. 89 կ.։ Քահանային պարտ ենք—85 ր., տիրացուին՝—15 ր.։ Դարձեալ հինգ ամսվայ ընթացքում—235 ր. 42 կ.։Ընդամենը—7146 ր. 02կ.։

Ելք եղել է

Զանազան ծախք—599 ր. 16 կ., նախկին երէցփոխից մնացած պարտք—245 ր. 58 կ., ընդամենը—845 ր. 01 կ.։ Ուրեմն առ 1-ն յունվարի 1908 թ. մնում է՝ ընթացիկ հաշւով բանկում—6144 ր. 63 կ., կանխիկ դրամ, ստանալիքներ և մոմ—156 ր. 65 կ.։

Եալտայի հայոց Աղօթատան
Երէցփոխ՝ Յովհաննէս Լազարեանց

1—1

Պահանջեցէք ամեն տեղ „ՕԴՕԲՐԻՆ“
Միայն ՄԻԽԱՅԻԼ ԼԵԲԵԴԵՎԻ
„Этикетъ утвержденъ прав.“ մակագրութիւնով

Գլխաւոր պահեստատեղին դեղագործական ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում։

(10, 20 30) 50—43

ԲԺԻՇԿ
Ս. Մ. ՄՕՆԻՆ

Մասնագէտ՝ սիֆիլիս, վեներական, միզանցքային և կաշու հիւանդութիւններ։ Միզանցքի բորբոքում և ցիստօսկօպիա։ Յատուկ անալիզներ։ Ընդունելութիւնը առաւ. $12\frac{1}{2}$—2 ժ. և երեկ. 5—8 ժ.։ Կիրակի օրերը 10—1 ժամը ցերեկվայ։ Միքայէլեան փողոց, № 24, տ. Քարթվելօվի, մուտքը Սեմենօվսկի փողոցից, № 4.

(Կ.) 4—1

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՕՆ
Հայ դերասանական ընկերակցութիւնը
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ
Երկուշաբթի, յունվարի 15-ին,
Յ. ԶԱՐԻՖԵԱՆԻ բենեֆիսին
Կը ներկայացնէ
ՈՒՐԻԷԼ ԱԿՕՍՏԱ
Դրամա 5 գործ. հեղ. Գուցկօվի
Մասնակցում է ամբողջ խումբը
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին

2—2

ՀՐԱՒԷՐ

Կիրակի, ամսիս 20-ին, առաւօտեան 11 ժամին, Էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցում լինելու է ծխականների երկրորդ և վերջին ժողով նոր երէցփոխի ընտրութիւն կատարելու համար. ուստի սրանով խնդրում եմ նոյն եկեղեցու երկսեռ ծխականներին՝ որոշած օրը և ժամին ներկայ լինել ժողովին՝ ընտրութեանը մասնակցելու։

Թիֆլիսի հայոց եկեղեցիների բ. մասի գործակալ՝ Ղևոնդ քահանայ
Մամիկոնեանց

2—2

Լոյս տեսաւ
Գրական սատիր-սիմվօլիկ պատկերազարդ ամսաթերթ
„ՍԱՓՐԻՉ“-ի
11—12 միացեալ համարը
և շուտով կուղարկվի բաժանորդներին։

Ներկայ համարին կցված է «Սափրիչ»-ի II պրէմիան՝ ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆԻ վերջին դիմանկարն աշխատանքի ժամին. մեծադիր, գունաւոր. առանձին չէ վաճառվում։

Լոյս տեսաւ նաև ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԻ գունաւոր պատկերը 13×18 սանտ. մեծութեամբ, կաւճահարթի պակայի վրա։ «Սափրիչ»-ի բաժանորդները ստանալու համար պիտի ուղարկեն 4 կօպէկի պօստային մարկա, իբրև ճանապարհածախս։

Խնդրում ենք մեր բոլոր պատւաւոր գործակալներին և այն անձանց, որոնք չեն վերջացրել իրանց հաշիւները խմբագրութեանս հետ, շտապեն ըստ կարելւոյն շուտով մաքրելու։

Հասցէ՝ С.-Петербургъ, Васильевск. остр. 12 л. 31/а, Редакція „Саприч“.
St. Petersburg, Wassil. ostr. 12 linia 31/a, Rédaction „Sapritch“.

2—2

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

Վերադարձաւ Կովկասի հանքային ջրերից և վերսկսեց ընդունելութիւնը ներքին և ջղային հիւանդների, առաւօտ. 9—12 ժ., երեկ. 5—7 ժամ։

Միքայէլեան փողոց, № 27։

(Ե. Հ. շ. Կ.) 50—49

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց

Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33։

(Ա. Օ.) 100—91

ԲԺԻՇԿ
Գ. ՄԱՂԱՔԵԱՆ

Ներքին եւ երեխայոց, առանձնապէս ստամոքսի եւ աղիքների հիւանդութիւններ։

Ընդունելութիւն ամեն օր | 12—1 ժ. առաւօտեան
5—7 ժ. երեկոյեան

Միքայէլեան փողոց տ. Ճավճավաձէի № 36.

(Ա.Օ.) 100—91

Ստ. Լիսիցեան, Յովհ. Թումանեան եւ Լ. Շանթ
Հայերէնի դասագիրք
ԼՈՒՍԱԲԵՐ

Այբբենարան և առաջին ընթերցարան.

Կովկասեան ուսումնարանական հոգաբարձուի կողմից ընդունված է իբրև դասագիրք տարրական և միջնակարգ դպրոցների համար։

ԳԻՆՆ Է 30 ԿՕՊԷԿ

Դպրոցներին և գրավաճառներին 20% զեղչ։ Կազմողներին դիմել՝ Тифлисъ, Бебутовская 25.

(3 մ.) 5—4

Լոյս տեսաւ և վաճառվում է
ԼԵՒՈՆ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆՑԻ
ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԲԱՐՈՅԱՊԷՍ ԸՆԿԱԾ
և
ԱՄԵՆՔԻՑ ԱՐՀԱՄԱՐՀՈՒԱԾԻՆ

276 մեծադիր էջ, գինը 50 կօպ.

Դիմել Թիֆլիսի և թէ այլ տեղերի գրավաճառներին, որոնց մօտ կարելի է ստանալ նաև հեղինակի միւս աշխատութիւնները, և կամ ուղղակի հեղինակին՝ Тифлисъ, Орбеліановская, № 24, Левону Вардани Меликъ Адамянцу.

Կ. 5—5

Մի ԱՂՔԱՏ ԸՆՏԱՆԻՔ խնդրում է բարերար մարդկանց՝ օգնել։ Հասցէն՝ Петхаинская ул., Поклонный пер., 5 уч., д. Хачатурова, № 10.

3—2

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ

ցանկանալով պատանի սերնդի մէջ ընթերցանութեան սէր արծարծել որոշել է առաջիկայ 1908 թ. սկզբից հրատարակել մի պարբերական պատկերազարդ երկշաբաթաթերթ

„ՊԱՏԱՆԵԿԱՆ-ԳՐԱԴԱՐԱՆ“

որի բովանդակութիւնը կը լինի թարգմանութիւն եւրոպական հռչակաւոր հեղինակներից, որպիսիք են՝ Ժիւլ-Վերն, Մայն-Րիդ, Ֆենիմոր-Կուպեր, Գուստաւ Էմար, Վալտեր-Սկօտ և այլք, որոնց վէպերն ու պատմուածքները շատ նպատակայարմար են ճանաչված, պատանիների ընթերցասիրութեան ծարաւը յագեցնելու համար։

„ՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ“-Ը

կը հրատարակվի կանոնաւոր կերպով երկու շաբաթը մի անգամ, ուրեմն տարվայ ընթացքում 26 գրքոյկ։ Այս 26 գրքոյկները մի երկու տարվայ ընթացքում իւրաքանչիւր ընտանիքի համար մի համեստ գրադարան կարող են կազմել։

Խմբագիր Կ. ԽԱՏԻՍԵԱՆ

Տարեկան գինն է Բագուի մէջ . . . . 5 ր.
Ուրիշ քաղաքներում . . . . 6 ր.
Արտասահման . . . . 8 ր.

Դիմել՝ Баку, редакція журнала „Патанеканъ-Градаранъ“—Контора Бакинскаго Армянскаго Культурнаго Союза.

8—8

ՆԵՐԿԱՅ 1908 ԹՈՒԱԿԱՆԻՑ
Թիֆլիսում կը հրատարակվի
Գեղարուեստ
ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱԳԻՏ., ԵՐԱԺՇՏԱԿԱՆ
Պատկերազարդ հանդէս
(Ամսագիր)

«Գեղարուեստի» գիրքը լինելու է մեծադիր, քառածալ (in quarto), նման եւրոպական գեղարուեստական առաջնակարգ հանդէսներին. ծաւալը՝ իւրաքանչիւր գիրքը 100 երես երկէջեան. առանձին եղող նկարները գունաւոր. կլիշէները պատրաստվում են Լայպցիգում և Պետերբուրգում. թուղթը ընտիր տեսակի, տպագրութիւնը կարելւոյն չափ խնամքով և շքեղ։

Աշխատակիցների անպայման վարձատրութիւն

Տարեկան բաժանորդագինը 10 րուբլի։
Արտասահմանի բաժանորդների համար 30 ֆրանկ։
Կարելի է վճարել մաս-մաս. իւրաքանչիւր գիրքը հատավաճառ 1 ր. 50 կ.
Թիֆլիսում բաժանորդ են գրվում «Գուտտենբերգ» և «Փարոս» գրախանութներում և Սուզանաջեանի մօտ։
Օտար քաղաքներից՝ Тифлисъ, Редакція „Гехарвестъ“.
Խմբագիր-հրատարակիչ՝ ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆ

3—3

Электропечатня «ЭКОНОМІЯ» Авакъ Мугдусіакоповъ съ С-ми. Большая Ванкская т. д. Семинаріи № 3